

Ս. Ն. ՏԵՐ-ՂԵՆԴՅԱՆ

10-ՐԴ ԴԱՐԻ ԱՐՄԲ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միջնադարյան արաբական մատենագրությունը հայոց պատմության, Հայաստանի տնտեսական կյանքի և մշակույթի տարբեր կողմերին առնչվող բազում արժեքավոր վկայություններ է տալիս ոչ միայն արաբական տիրապետության, այլև շատ հաճախ բազրատունյաց ժամանակաշրջանի մասին: Բազրատունյաց օրոք Հայաստան այցելած արաբ մատենագիրներից է Աբու Դուլաֆը, որի հաղորդած տեղեկությունները ուշագրավ են:

Աբու Դուլաֆ Միսար իբն Մուհալհիլը ապրել է մոտավորապես 10-րդ դարի երկրորդ կեսում: Նրա անունով հայտնի են երկու գրվածք կամ «ռիսալա» (նամակ, թուղթ), որոնցից առաջինը (Միջին Ասիայի մասին) վաղուց հայտնի էր և ուսումնասիրված, իսկ երկրորդը երկար ժամանակ մնում էր անհայտ: Աբու Դուլաֆի երկրորդ գրվածքի ձեռագիրը հայտնաբերվեց 1922 թ. Պարսկաստանի Մեշհեդ քաղաքում: Դա մոտավորապես 13-րդ դարի մի արժեքավոր գրչագիր է, որը պարունակում է նաև 9-րդ դարի աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհի աշխարհագրության ընդարձակ (կորած) խմբագրության մի հատվածը և իբն Ֆադլանի Վուլգայի վրա կատարած ճանապարհորդության հայտնի նկարագրությունը: Աբու Դուլաֆի երկրորդ գրվածքի ի հայտ գալը կարևոր իրադարձություն էր արևելագիտության համար, ուստի պատահական չէ, որ նրա արաբերեն բնագիրը հատուկ քննարկման առարկա դարձավ և երկու հրատարակություն ունեցավ¹:

Այս գրվածքը վերաբերում է Իրանին և մասամբ Հայաստանին: Աբու Դուլաֆը Իրանի վրայով մտել է Ատրպատական, ապա Շիրվան և վերջապես Ուտիք նահանգից անցնելով, հասել է Տփղիս: «Ապա մտա Հայոց երկիրը, ասում է նա, մինչև որ հասա Թիֆլիս: Սա մի քաղաք է, որից այն կողմ, այլևս մահմեդականություն չկա»²: Այստեղից նորից իջնելով Հայաստան, նրա լեռնային գավառների՝ Վայոց Ձորի (Վայգուր), Կապանի (Կաբան) և Խաչենի (Խաջին) վրայով իջել է Արաքսի հովիտը և ապա ուղղվել դեպի Ատրպատական:

Ուրմիո լճի կողքով Աբու Դուլաֆը նորից է մտնում Հայաստան՝ Վասպուրականի կողմերը: Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր Աբաս թագավորի իշխանության տակ (928—953), որի օրոք Վասպուրականի Արծրունի թագավորները լրիվ ինքնուրույնություն էին վայելում: Աբու Դուլաֆը հիշում է, որ Վանա լճի մեջ, ուր տառեխ (արաբ. թիռիխ) ձուկն են բռնում, կա բորակ: Բո-

¹ Abū-Dulaf Misar Ibn Muhalhil's travels in Iran (circa A. D. 950), by V. Minorsky, Cairo, 1955, Вторая записка Абу-Дулафа, Москва, 1960.

² Abū-Dulaf (արաբ.), էջ 6:

³ Նույն տեղում, էջ 8:

րակ կա նաև Ապահունիք (Բաջունայս) գավառում: Ապա հիշում է աղի, պղնձի և այլ հտնքեր, ինչպես նաև բուժիչ բույսեր:

Աբու Դուլաֆը հիշում է ինչ-որ հայկական անորոշ եկեղեցական աղանդ: Նա ասում է. «Այս երկրի բնակիչները սիրում են հյուրին ծառայել և առատաձեռնորեն հյուրասիրել: Նրանք հնազանդ են իրենց հոգևորականներին⁴, այնպես որ երբ մեկի մահը մոտենում է, կանչում է քահանային, տալիս է փող և խոստովանում իր գործած մեղքերից մեկը, իսկ քահանան թողություն է տալիս: Նա քավություն և թողություն է շնորհում նաև նրա մնացյալ մեղքերի համար:

Ասվում է, որ քահանան փռում է իր շուրջաւոր և ամեն անգամ մի մեղք հիշելիս ձեռքը բացում է, ապա սեղմում և ասում՝ «բռնեցի այն», հետո նետում է շուրջառի մեջ: Երբ այլևս ոչ մի մեղք չի մնում, քահանան հավաքում է շուրջառը, վերցնում և դուրս գալիս, ասելով՝ «Ես վերցրել եմ քո մեղքերը և կնետեմ ամայի դաշտը»⁵, և հաստատում է նրա սրտի մեջ մեղքերի թողության ու ներման (հավատը): Այս սովորությունը բացի սրանցից ոչ մի կրոնի մեջ գոյություն չունի, իսկ սրանք սոսկ հայերի մի տեսակն են»:

Մատենագրի վերջին ականարկից երևում է, որ խոսքը հայ եկեղեցուն պատկանող հոգևորականի մասին չէ, այլ հայկական ինչ-որ աղանդի է վերաբերում: Բազրատունյաց ժամանակաշրջանում որպես հայ եկեղեցուց հեռացած հատվածներ կարելի է հիշել թոնդրակյաններին և հայ ուղղափառներին: Սակայն թոնդրակյաններին դժվար է վերագրել վերոհիշյալ սովորությունը, քանի որ նրանք քահանայի կողմից մեղքերի թողությունը թույլատրելի չէին համարում: Արիստակես Լաստիվերտցին գրում է, որ հակառակ եկեղեցական այն կանոնի, թե մեղավորը «պարտ է զխոստովանութիւնն ընդունել», Հարրի Հակոբ եպիսկոպոսը, որպես թոնդրակյան աղանդավոր, ուսուցանում էր թե որ ինքն իւրով անձամբն՝ որով մեղան և նովիմք չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ պատարագք»⁶:

Գուցե ավելի հավանական է այս հայ աղանդավորներին որոնել ուղղափառության հարած հայկական շրջանակներում, սակայն այս դեպքում ևս բավարար հիմքեր չունենք, թեկուզ միայն այն պատճառով, որ վերջիններս այդ ժամանակ հեռու էին Վանա լճի ավազանից: Ըստ Ստեփաննոս Ասողկի վկայության, նույնիսկ Սեբաստիայում հայոց Սմբատ Բ (977—990) թագավորի օրոք էր միայն, որ հայ եկեղեցականներն ընդունեցին Քաղկեդոնի որոշումները, տեղի տալով հույն ուղղափառ եկեղեցու հալածանքներին⁷:

Չափազանց հետաքրքրական են Աբու Դուլաֆի հայ միջնադարյան (մանավանդ եկեղեցական) երաժշտության մասին գրած տողերը⁸, որոնք հետևելով են վերոհիշյալ հատվածին:

«Նրանց ձայները, Ավետարանի ընթերցումների ժամանակ, և նրանց եղանակների շափը ավելի հաճելի է և թախծոտ, քան քրիստոնյա այլ խմբերի ձայները: Եղերերգության և ողբի բնական հակում ունեցող տխուր մար-

⁴ Բառացի՝ վանականներին:

⁵ Բառացի՝ անապատը:

⁶ Պատմութիւն Արիստակիսի լաստիվերտցույ, Երևան, 1963, էջ 122:

⁷ Ստեփանոսի Տարսնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 201—202:

⁸ Aḡū-Dulaf (արար.), էջ 9: Ըստ երևույթին այստեղ խոսքը աղանդավորների երաժշտության մասին չէ, այլ ընդհանրապես հայերին է վերաբերում (Вторая записка, էջ 8):

դու սրտի համար նրանց երգեցողությունը ավելի արտասովաբեր է, քան արար եղերերգուների ողբերը:

Նրանց երգեցողությունը եկեղեցիներում ավելի հաճելի է, զգայուն և ուշադիր մարդու համար, որովհետև հաճույքը և բավականությունը եղանակների հաճախակի լսելուց⁹ է ստացվում:

Ասվում է, որ նրանց երգեցողությունը լարային (գործիքների) ընկերակցությամբ իրոք հաճելի է և հարազատ:

Մահմեդական մատենագրի կողմից հայ եկեղեցական երաժշտության մասին այս հետաքրքրական տեղեկությունը բացառիկ փաստ է մեր պատմության մեջ: Ըստ երևույթին, նա անձամբ հաճախել է հայկական եկեղեցիները և ինչպես իր ականակից կարելի է եզրակացնել երկար ու համբերատար ունկնդրելուց հետո համոզվել, որ հայկական շարականների երգեցողությունը ոչ միայն թախծոտ է ու տխուր, այլև խորն է ու տպավորիչ:

Ինչպես վկայում են հայ եկեղեցական երաժշտության պատմության ուսումնասիրությունները, 10-րդ դարում այն զարգացման բարձր աստիճանի էր հասել: Դեռևս 5—8-րդ դարերում¹⁰ ձևավորվել էր շարականների արվեստը, իսկ 8—9-րդ դարերում արդեն առաջացել էր նաև հայկական խազային նոտագրությունը¹¹: Բազրատունյաց ժամանակաշրջանում (մանավանդ 10-րդ դարում) սկիզբ է առնում հայկական եկեղեցական և աշխարհիկ երաժշտության զարգացման մի նոր՝ բարձր աստիճան, որը նույնիսկ բնորոշվում է որպես վիթխարի վերելք¹²: Հետաքրքրական է լարային գործիքների մասին Աբու Դուլաֆի տված բնորոշումը: Բազրատունյաց ժամանակաշրջանի հայ մատենագիրները (Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Գրիգոր Նարեկացի) նույնպես որոշ տվյալներ ունեն¹³ հայկական լարային գործիքների (քնար, տավիղ և այլն) մասին:

Աբու Դուլաֆը նշում է, որ հայ աշխարհիկ երաժշտությունը, ի տարբերություն եկեղեցականի, ուրախ է: Այս երևույթի մասին հաճախ են վկայել մեր մատենագիրները, աշխարհիկ գուսանական արվեստը (ոչ միայն բանաստեղծական բովանդակությամբ, այլև երաժշտական տրամադրությամբ) համարելով նույնիսկ «դիվական»:

Հավանաբար քաղաքային միջավայրում պետք է փնտրել Աբու Դուլաֆի հիշած լարային գործիքների ընկերակցությամբ նվագվող ուրախ երաժշտությունը: 10—11-րդ դարերը հայ երաժշտության պատմության մեջ համարվում են աշխարհիկ երաժշտության (տաղերգուների արվեստի) զարգացման ժամանակաշրջան, զարգացում, որը տեղի էր ունենում հիմնականում քաղաքային միջավայրում¹⁴:

9 Բառացի՝ կրկնությունից:

10 Այդ դարերի հայ երաժշտությունը մանրակրկիտ ուսումնասիրման առարկա է դարձել: Տե՛ս ն. Թ ա հ մ ի ղ յ ա ն, Հայաստանի երաժշտական մշակույթը Ե—Ը դարերում, թեկնածուական քննաճառ, Լենինգրադ, 1960:

11 Ի. Ա թ ա յ ա ն, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 69—112:

12 Ա. Շ ա հ վ եր ղ յ ա ն, Հայ երաժշտության պատմության ականակներ, Երևան, 1959, էջ 55:

13 է. Խ ա ն զ ա ղ յ ա ն, Հայկական հին երաժշտական գործիքները, Աշխատություններ Հայաստանի պետ. պատմ. թանգարանի, հատ. 5, Երևան, 1959, էջ 82—84:

14 X. К у ш н а р е в, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958, стр. 131.

А. Н. Тер-Гевондян

АРАБСКИЙ АВТОР X в. ОБ АРМЯНСКИХ ОБЫЧАЯХ И МУЗЫКЕ

Р е з ю м е

Абу Дулаф является одним из тех арабских средневековых писателей, который лично посещал Армению. На основании своих наблюдений он сообщает немало интересных и важных сведений о культурной жизни страны.

В сочинении «Вторая записка» Абу Дулаф подробно описывает свое путешествие по восточным и южным областям Армении. В результате этой поездки он сообщает о существовании одной неизвестной армянской секты, которая, однако, ничего общего не имеет с Тондракитами.

Исключительное впечатление на арабского писателя произвела армянская средневековая музыка. Он подчеркивает своеобразие и оригинальность как церковной, так и светской музыки.